Շնորհավոր երիտասարդներին՝ միջազգային օրվա կապակցությամբ

Հասարակության ամրապնդման գործում նշանակալից դեր ունի` խելացի, կրթված, նախաձեռնող, վճռական, գործուն և պահանջատեր երիտասարդը, նա է հանդիսանում Հայաստանի զարգացման հիմնաքարը:

Օգոստոսի 12-ը Երիտասարդության միջազգային օրն է: 1999 թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ օգոստոսի 12-ը հռչակվել է Երիտասարդության միջազգային օր: Այն ընդունվել է 1998թ. օգոստոսի 12-ին Լիսաբոնում անցկացված երիտասարդության հարցերով նախարարների համաշխարհային խորհրդաժողովի առաջարկությամբ: Աշխարհում առաջին անգամ Երիտասարդության միջազգային օրը նշվել է 2000թ. օգոստոսի 12-ին: Տոնը հռչակվել է երիտասարդությանն ուղղված գործողությունների համաշխարհային ծրագրի մասին երիտասարդության իրազեկության բարձրացմանը նպաստելու նպատակով:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն կարևորում է իր աշխատանքների մեջ երիտասարդների դերն ու նրանց հետ համագործակցությունը, քանի-որ երիտասարդներն են հանդիսանում կազմակերպության առաքելության և գործունեության հենքն ու կրողը, իրենք են երաշխիքը քաղաքացիական հասարակության կերտման և ժողովրդավարական արժեքների ամրապնդողը մեր երկրում :

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն վստահ է, որ վաղվա օրը կերտողը հենց երիտասարդությունն է լինելու և այս գեղեցիկ տոնի կապակցությամբ իր շնորհավորական ուղերձն է հղում Հայաստանի ողջ երիտասարդությանը, ցանկանում կամք ու հավատ և հաջողություններ նախաձեռնած գործերի մեջ: Շնորհավոր...

1 / 1